

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՄԵԺԱՄԵԺ ԿԱՅՍԵՐԱՅ ԹՈՒՂԹ

ՈՐ ԿԱՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ Ի ՀԱՂԲԱՑ ԼՈՒՍԱՀՈԳԻՔՆ ԱՅՆՔ:

Ի ժամանակս թագաւորացն յունաց Միքայէլի վրաց Բագրատունեան Բագարատին և որդւոյ նորին Գէւորգեայ, և հայոց Գագիկայ և որդւոյ նորին Սմբատայ, և որդւոյ Աշոտեան Բագրատունւոյ և աղուանից Կիւլիկէի և որդւոյ նորին Ուորիոսի և Ներսէսի, որ միաբանութեամբ և սիրով պատրաստեցան երթալ ի պարսիսպաս Մէլիք շահ մեծ թագաւորին, զի թագաւորաց թագաւորն Մէլիք շահ, կամեցաւ խաղաղութիւն և սէր արկանել ընդ քրիստոնէից, վասնորոյ առաքեաց զդեսպան զմին ի հաւատարիմ ծառայից իւրոց, որոյ անուն էր Աբդուլ, որ եկն հրաւիրակ թագաւորացն քրիստոնէից, այսինքն յունաց, հայոց, վրաց և աղուանից, առ ի գնալ ի դուռն մեծ թագաւորին պարսից, բայց թագաւորն յունաց ոչ կամեցաւ գնալ ի տեսութիւն մեծ թագաւորին վասնորոյ թագաւորքն վրաց Գէւորգ, հայոց Գագիկ և աղուանից Կիւլիկէ ժողովեցան առ Բագրատ և սիրով միաբանեցան զի գնացեն ի պարս առ մեծ թագաւորն Մէլիք շահ, որ և այնու միաբանութեամբ եկին ի դուռն սրբոյ և մեծի վանիցն Հաղբատու. ի աղաչել զԱստուած, և զսուրբ նշանն Տէրունական թերևս օգնեսցէ և յաջողեսցէ զճանապարհս նոցին մաղթանօք Արք եպիսկոպոսին Հաղբատայ և խոստացան արեամբ ներկեալ սուրբ նշանին Քրիստոսի խոստմունս և ընծայս մեծամեծս, զի եթէ խաղաղութեամբ վերադարձցեն ի պարսից երկրէն մեծ պատիւս տացեն սրբոյ վանիցն հաղբատայ. և մինչ գնացին յաջողութեամբ Տեսուն և սրբոյ նշանին. թագաւորն պարսից ի տեսանելն զթագաւորսն քրիստոնէից մեծաւ պատուով և

սիրով ընկալաւ զնոսա և առննթեր իւր պահեաց և շնորհեաց բազում պարգևս և զթուղթս ազատութեան. և վերջապէս այսպիսի փառաւոր պատուով վերադարձոյց զնոսա ի բնակութիւնս իւրեանց. եւ նոքա եկեալ յաջողութեամբ և մեծաւ ուրախութեամբ ի յերկիրս իւրեանց ժողովեցան միաբանութեամբ և եկին ի դուռն սրբոյ վանիցն Հաղբատու առ ի կատար հասուցանել զխոստմունս իւրեանց. Անդ գտանեցան յայնմ ժամու և երկու կաթողիկոսքն հայոց Բարսեղ և աղուանից Ստեփաննոս որք եկեալ էին ի թաղումն հանգուցեալ Արք եպիսկոպոսին Հաղբատայ, յետոյ լուեալ էին Բագարատ Ներսէս և մեծն Յովհաննէզ ելեալ էին ընդ առաջ և գնացեալ յուխտ ի Հաղբատ և ընտրեցին անդ քահանայ ոմն ի յառաջադրութեան տանն Հաղբատու, Գագիկ արքայի սուրբ և փիլիսոփայ խաղաղ և յամենայն առաքինութեամբ զարդարեալ Բարսեղ անուն և հրամանաւն թագաւորաց երկու կաթողիկոսքն ձեռնադրեցին զքահանայն ի յառաջնորդութիւն սրբոյ վանիցն Հաղբատու. եւ այս երկու կաթողիկոսքն ընծայեցին յատուկ իւրեանց վիճակիցն բազում վիճակս ի ծառայութիւն մեծի վանիցն Հաղբատայ հրամանաւ և կամակցութեամբ բոլոր արքայիցն և մեծամեծ եշխանացն հայոց և աղուանից. Բարսեղ կաթողիկոսին վիճակիցն ալստեանցն Տաշիրն և ամրոցն Լոռի իւրեան բոլոր թէմիւն, Բաղանց տաղան իւրեան բոլոր թէմիւն խօրնուտակոտն իւրեան թէմիւն, հայունւոյ և ծանկունոյ տախտն իւրեան թէմիւն, օձնու տախտն իւրեան թէմիւն, թիֆլիզ քաղաքն վերն գօրի սամշվերդէն դմոնիսն և բուղամու ձորն իւրեանց թէմիւն, վերի ցեխլվան թամարէշնն զօրնիսն չիխօրն սամծուէրն և մծօվրէթն իւրեանց թէմիւն բրինձն նաքաստէվն և այլն սուրամն ղօգիցին տաէնն ղեղումն. կախէթն շաքին վարխուանն ղուրբութի ծայրն, բոլոր սումսէթայ տանն նախէ դուռն, ճապալայն տալաւէրն, զօր ինչ վրաց արքայի վիճակումն հայք գտանին Գրիգոր լուսաւորչու դաւանութեամբն բոլորն Հաղբատայ ծառայօղ լինին, վրաց արքայից Բագարատայ և Գէւորգեայ նուիրեալն այս է ախալքալաքն սամցիւնն ի մօզովն սաջաւախօն, զաւպէն, իմէրէթ զարդանուճն բուլբուլեանն, քօբուլեանն, սվանտալէն թատումն ածողվէրն և այլ նորին վիճակքն մեծի Յովհաննու հրամանաւն.

և մեր հայոց ազգքս ետուք սրբոյ նշանին Հաղթատայ վի-
ճակն աղուանից տայօղն գօրականն ձորագեղն, կայեանն
կայէծօնն աղէստաֆէն խօջաբաղարն մահկանն, գաբէն շամ-
բօրն, շաքեն. և մերս թեմից գաւաղէնն բարամն իւրեան
թէմիւն մանասն իւրեան թէմիւն, մինչև ի վօդամած իւրեան
շրջակայ գիւղօրէիւքն շէնիւքն և անշէնիւքն այսօրեկը բո-
լոր վրաց թագաւորին հայոց թագաւորին և աղուանից թա-
գաւորին նուիրեալն է երգամբ և դաշնադրութեամբ խոս-
տացաք և կատարեցաք այսու պայմանաւ՝ զի զոր ինչ հա-
յոց և աղուանից վիճակուամ վրաց ազգք գտանիցին մըծ-
խըթայու ծառայեսցեն և զորս ի վրաց վիճակուամ հայոց
ազգք գտանին սրբոյ վանիցն Հաղթատայ ծառայող լինիցին,
հրամանաւ և կամօք Աստուծոյ օրհնեալ մեծ պատկաւոր թա-
գաւորին վրաց, Բագարատայ և որդւոյ նորին Գէւորգեսոյ,
Բագարատունւոյ և հայոց թագաւորին Գագկայ և աղուա-
նիցն թագաւորին Նիւլիկէ, Աստուածասէր և բարեպաշտօն
անշարժ պահօղբդ անսուտ հրամանսն մեծ թագաւորացն և
կաթողիկոսացն օրհնեալ լիջիք ի սրբոյ երրորդութենէն և
ամենայն սրբոց նորա. աստ երկար ամօք և խաղաղութեամբ. և
ի հանդերձելն զուարթերես և չարայաղթք լինիջիք, և առ-
քայութեանն Աստուծոյ արժանի մեծաւ պատուով և յաղ-
թօղք թշնամեացն խաչին Գրիստոսի որք գալոց են ի վերայ
քրիստոնէից և յաւուրն դատաստանի յաջակողմեան դա-
սուն արժանի լինիջիք տեսութեան Գրիստոսի և լսելոյ ըզ-
բաղցր բարբառն, որ ասէ եկայք օրհնեալք հօր իմոյ, ժա-
ռանգեցէք զպատրաստեալն ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ
աշխարհի։ Եւ ով որ սորին եղծմանն ձեռնամուխ լիցի. և
այլոց թագաւորաց նուիրեալ յեշտակսն խափանել ջանասցէ
կամ թագաւոր կամ կաթողիկոս կամ եպիսկոպոս կամ քա-
հանայ և կամ մեծ և փոքր իշխանք. արք և կանայք և
այսց վանօրէից ժողովուրդն հանցէ զորս մեք նուիրեալ եմք.
և զխոստմունս մեր կատարել հրամանաւ մերով թագաւորքս
և կաթողիկոսքս սորին եղծանողն անիծեալ լիցի ի յԱստու-
ծոյ և զպատիժս դատանի, աբերօնի, կայէնի, յուդայի և
խաչահանուացն առցէ և զտանջանս դժոխսոցն ժառանգեսցէ
յաւիտեանս յաւիտենից ամէն. նա ևս ի յետագայից մերոց,
թէ թագաւոր թէ կաթողիկոս և թէ պատրիարկ գտանիցին

զայս մերս նուիրեալ անջնջելի յիշատակն, եղծանել խել խա-
փանել չունին կարողութիւն, վասնզի ետուք անշարժ և ան-
խափան սրբոյ վանիցն Հախբատայ նա ևս եթէ հայոց կամ
աղուանից կաթողիկոս կամ պատրիարք ոչ գտանիցին հրա-
մանատուն լինելոց է սրբոյ վանիցն եղեալ Հաղբատայ Արք-
եպիսկոպոսն Իսկ եթէ նա ևս սրտացաւօրէն ոչ աշխատիցէ
զնուիրեալ յիշատակն մեր ի սուրբ վանիցն հանեալ ի կո-
րուստ վասնիցէ, ինքն ևս հանցի ի եպիսկոպոսէն իւրմէ և
զոր ինչ նդով ի վերն գրեալ եմք նաևս ժառանգեսցէ: Նմա-
նապէս հաստատ պահօղքն և կատարօղքն սորին եղիցին օրհ-
նեալք յԱստուծոյ և զուարճասցի հոգինոցին ի յուրախու-
թիւնս արքայութեան յերկնից ի յարութեան յաւուրն յետ-
նում. և ով որ լիցին սիրօղք սրբոյ երրորդութեանն և Բրիս-
տոսական հաւատոյն այս հրամանս թագաւորական հաստատ
և անշարժ պահեսցեն որ և շնորհք տեառն Աստուծոյ և
ամենայն սրբոց նորա վայելեսցեն ուրախութեամբ յաւիտեանս
յաւիտենից ամէն: Գրեցաւ ի թուին հայոց, հինգ հարիւր
և երկու տասանին:

Մեր օծեալ Թամրազ Արքայի որդի արքայ վրաց կախից
Ղազախու բռնչալու և շամշադնու աիրօղ կալնօղ և հրամա-
յօղ Երկրորդ հերակլ քննեցաք զհախբատայ ժողովուրդն և
զհին գուջարներն և ստոյգն իմացաք որ բարթլու կախէ-
թու և իմէրէթու բնակիչ քրիստոնեայքն հախբատայ ժողո-
վուրդ են լեալ որովհետեւ ի յառաջին թագաւորացն նուի-
րեալ էր բարթլու կախէթու և իմէրէթու հայոց ժողովուրդն
ի ծառայութիւն հաղբատու թէ իշխանք թէ աջնիւորդիք,
թէ ռամիկք. վասն որոյ մեր ևս այսպէս հաստատեցաք գու-
ջարի օրինակս զայս. զի եթէ ի բարթլ և կամ ի կախէթ
հայոց դաւանութեամբն եկամուտ ժողովուրդք գտանիցին
նոքա ևս Հաղբատայ ծառայօղքն լինելոց և բաց ի նմանէ
ոչ որ կարէ ձեռնամուկ լինել, զի ի մէջ ամենայն քրիստոնէից
այսպիսի սահմանադրութիւնս կայ. մայիսի 4-ին: ի 1779
թււին: